


ի պաշտպանություն պրոգրեսիվ եկամտային հարկի
**ՀԱՄԱՀԱՐԹԵՑՈՒՄԸ ՀԱԿԱՍՈՒՄ Է ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆԸ
ԵՎ ՎՏԱՆԳՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ**

Դիրքորոշում հարկային քաղաքականության մասին

Ամփոփ հիմնավորում

Ստորև ներկայացվող գծապատկերը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարության կողմից առաջարկվող 23 տոկոսադրույքով համահարթ եկամտային հարկը՝

- մեծացնում է տնօրինվող եկամուտների անհավասարությունը, ստեղծում է նոր սոցիալական անարդարություն և դրա լուծումը տեղափոխում պետբյուջեի վրա,
- բևեռացման արդյունքում լուրջ մարտահրավերներ է ստեղծում տնտեսական աճի համար (տես՝ ներառական աճի մասին կցված աղբյուրները),
- մերժում է պրոգրեսիվ վերաբաշխումը, բայց մյուս կողմից հանգեցնում է հակառակ վերաբաշխման՝ ի օգուտ բարձր վաստակողների և ի վնաս ցածր վաստակողների, ինչն ավելի է սրվելու սպառման հարկերի բարձրացման դեպքում,
- հանգեցնում է բյուջետային միջոցների զգալի կորուստների՝ բացասաբար ազդելով կրթական, առողջապահական և սոցիալական ծախսերի համար,
- սասանում է անապահով և միջին խավերի հանրային համերաշխությունը և հանգեցնում քաղաքացիների կողմից հարկերի վճարման մոտիվացիայի թուլացման:



Համահարթ եկամտային հարկի ներմուծման համար բերվում են ստվերի հաղթահարման, շեմերի վերացման միջոցով բարձր աշխատավարձերի և ներդրումների խրախուսման հիմնավորումներ: Այնինչ, համահարթեցումն ինքնին չի կարող հանգեցնել ստվերի հաղթահարման, այն նախևառաջ վերաբաշխման քաղաքական որոշում է՝ ի նպաստ բարձր վաստակողների: Համահարթ հարկի կողմնակիցներն առաջնորդվում են 1990-ականների տնտեսագիտական պատումներով, կապիտալի քիչ հարկման և սպառման շատ հարկման մոտեցումներով՝ անտեսելով 2008թ.-ի ճգնաժամից ի վեր աշխարհում տիրապետող ներառական տնտեսական աճի սկզբունքները (ԱՄՀ, ՀԲ, ՏՀԶԿ և մյուս աղբյուրները կցվում են): Այսինքն հաշվի չեն առնվում ոչ միայն ՀՀ ներկայիս տնտեսական պայմանները, այլ նույնիսկ միջազգային կազմակերպությունների քաղաճ դասերն ու մոտեցումների շրջադարձը՝ ի օգուտ վերաբաշխման և պրոգրեսիվ համակարգի:

ԱՌԱՆՁԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԱՐՑԸ

- Համահարթ եկամտային հարկը մեծացնում է անհավասարությունը և բացառաբար ազդում տնտեսական աճի վրա:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Նոյեմբերի 13-ին Ազգային ժողովում 2019թ. պետական բյուջեի նախագիծը ներկայացնելիս ֆինանսների նախարար Ատոմ Զանջուղազյանը նշեց, որ Հայաստանում մտահոգիչ է եկամուտների աճող անհավասարությունը (Ջինիի ինդեքս): Իսկ նոյեմբերի 15-ին ՀՀ կառավարությունը e-draft.am կայքում հրապարակեց Համահարթ 23 տոկոսանոց եկամտահարկի մասին փոփոխությունների նախագիծը, ինչի արդյունքում էլ ավելի կխորանա ճեղքվածքը հարուստների և աղքատների միջև:

Դեկտեմբերի 4-ին տեղի ունեցած ասուլիսի ժամանակ ՀՀ ֆինանսների փոխնախարար Արման Պողոսյանը որպես երկու հնարավոր նպատակներ նշում է «վերաբաշխումն» ու «աշխատանքի հարկի նվազեցումը», այնուհետև, հակադրելով մեկը մյուսին, հայտարարում է. «Այո, մենք հայտարարել ենք, որ այս փոփոխությամբ այս փուլում մենք եկամուտների վերաբաշխման հարց չենք լուծում, մենք լուծում ենք ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հարց»: Այս եզրահանգումն անելուց հետո փոխնախարարը նախապատվությունը տալիս է վերաբաշխման այն տարբերակին, որը նպաստավոր է լավ վաստակողների համար: Այս քայլը հիմնավորվում է նրանով, որ 200.000 դրամից պակաս ստացողների համար միևնույն է էական հարկային թեթևացում չի կարող լինել: Թե ինչու է այս տրամաբանությունը սխալ, հիմնավորում ենք ստորև:

ՓԱՍՏԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համահարթ եկամտային հարկի ներմուծման հայաստանյան կողմնակիցները պնդում են, որ եթե անհավասարություն առաջանա, ապա այն հնարավոր է հաղթահարել բյուջետային վերաբաշխման միջոցով: 2014թ. ԱՄՀ Օստրիի գեկույցը ասում է, որ շուկայում եկամուտների անհավասարությունը առաջացնում է ավելի մեծ վերաբաշխման անհրաժեշտություն, իսկ տնօրինվող եկամտի անհավասարության նվազումը հանգեցնում է ավելի մեծ տնտեսական աճի:

Ավելին՝ միջինացված արդյունքներով վերաբաշխումը մեծացնում է տնտեսական աճը: Նույն եզրահանգմանն է գալիս ՏՀԶԿ 2015թ. հետազոտությունը: Լավագույն օրինակը Վրաստանն է, որը 2003թ.-ին եկամտահարկի համահարթեցման արդյունքում այսօր դարձել է եկամուտների անհավասարությամբ աշխարհում 8-րդ երկիրը (նախկին ԽՍՀՄ երկրների շարքում՝ առաջինը): Այսպիսով, 2008թ. հետճգնաժամային վերլուծությունները հանգեցրել են պետության դերի և վերաբաշխման մոտեցումների լուրջ վերանայման: Տես ստորև՝ առանձին երկրների փորձը և վերլուծական աղբյուրները:

- Համահարթ եկամտահարկ ներմուծվել է այն կառավարությունների կողմից, որոնք եղել են աջակողմյան և գերադասել են կապիտալի շահերը:
- Սլովակիան 2013 թ.-ին համահարթից կրկին վերադարձել է պրոգրեսիվ համակարգին, ինչի արդյունքում բյուջետային մուտքերը ՀՆԱ 34 տոկոսից բարձրացել են 40 տոկոսի՝ արձանագրելով տնտեսության վերականգնում:
- Վրաստանի կառավարող կուսակցության մաս կազմող ՍԴԿ-ն ջանքեր է գործադրում պրոգրեսիվ համակարգին վերադառնալու համար, քանի որ համահարթ համակարգը հանգեցրել է պետական միջոցների զգալի կորստի և հարկային բեռի մեծ մասի փոխանցմանը անապահով խավերին (տես՝ Վրաստանի բացասական փորձի մասին մանրակրկիտ հետազոտությունը):
- Գերմանիայի տնտեսության բարդ շրջանում (2005թ.) եղել է համահարթ եկամտահարկի ներմուծման հանրային քննարկում, սակայն հետազոտությունները բացասական վերաբաշխում են կանխատեսել և այն մերժվել է, իսկ մեկ տարի անց Գերմանիայի տնտեսությունը կրկին վերականգնվել է առանց համահարթ հարկի:
- Մակեդոնիայի նոր կառավարությունը 2019թ. սկզբին կրկին կվերադառնա պրոգրեսիվ համակարգին՝ բյուջետային զգալի կորուստները վերականգնելու նպատակով:
- ԵՄ երկրների գերակշիռ մասը ունի պրոգրեսիվ հարկային համակարգ:
- Աշխարհի սակավաթիվ երկրներ են կիրառում համահարթ եկամտահարկ, քանի որ այն համարվում է անարդար և հակասում է համերաշխության գաղափարին:

Համահարթի կողմնակիցները պնդում են, որ պրոգրեսիվ համակարգը Հայաստանում 2013թ.-ից ի վեր հանգեցրել է անհավասարության Ջինիի ինդեքսի աճին: Այնինչ 2013թ.-ից առաջ ՀՀ-ում նույնպես գործել է պրոգրեսիվ հարկային համակարգ և 2013թ.-ից հետո անհավասարության աճը պայմանավորված է բոլորովին այլ քաղաքական գործոններով:

Եվ հակառակը՝ կից գծապատկերից երևում է, որ Վրաստանում 2003թ.-ին համահարթ եկամտային հարկի ներմուծումից հետո սկսել է աճել անհավասարության Ջինիի գործակիցը: Կարելի է նկատել, որ Վրաստանում Ջինիի գործակիցը միշտ Հայաստանից ավելի բարձր է եղել և այսօր էլ մի քանի կետով բարձր է:

GINI index (World Bank estimate)

World Bank, Development Research Group. Data are based on primary household survey data obtained from government statistical agencies and World Bank country departments. For more information and methodology, please see PovcalNet (research.worldbank.org/PovcalNet/index.htm).

License: CC BY-4.0



Իսկ Հայաստանում վերջին տարիներին արձանագրված Զինիի գործակցի աճը հատկապես խոսում է այն մասին, որ պետք է ձեռնպահ մնալ անհավասարության աճին նպաստող ցանկացած գործողությունից:

Անհավասարությունը և վերաբաշխման մասին վերլուծությունները 2008թ. ճգնաժամից հետո

- IMF (2014), INET (2013/14)
- OECD (2015): *“In it together: Why less inequality benefits all”*
- Wilkinson/Pickett (2010): *“The spirit level: Why equality is better for everyone”*
- Thomas Piketty (2014): *“Capital in the 21st century”*
- Joseph Stiglitz (2012): *“The price of inequality”*
- Anthony Atkinson (LSE) (2015): *“Inequality – What can be done?”*

2. ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏՎԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

– Տոկոսի համահարթեցումը չի հանգեցնում ստվերի հաղթահարման, այլ քողարկում է հարկային վարչարարության խորքային բարեփոխման անհետաձգելիությունը: Վարչարարության դյուրացման փաստարկը լոկ քաղաքական որոշման պատրվակ է:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Համահարթեցման կողմնակիցները որպես հիմնավորում բերում են հարկային վարչարարության դյուրացումը: Ըստ այդմ, նաև համահարթ տոկոսադրույքի արդյունքում պետք է հաղթահարվի ստվերը և գործատուները պետք է ստվերից դուրս բերեն չգրանցված աշխատավարձերը: Ենթադրվում է, որ դրան նպաստելու է շահութահարկի և դիվիդենտի հարկման հավասարեցումը եկամտային հարկի տոկոսադրույքին: Հարց է ծագում, թե ինչ կապ ունի տոկոսադրույքի համահարթեցումը աշխատավարձերի գրանցման հետ:

ՓԱՍՏԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Վրաստանի օրինակը ցույց է տվել, որ աշխատավարձերի ստվերից դուրս գալու պատճառը եղել է ոչ թե համահարթեցումը, այլ հարկային վարչարարության համապարփակ բարեփոխումը՝ վերապատրաստումների, էլեկտրոնային կառավարման, վերլուծական աշխատանքի և պատիժների խստացման միջոցառումների արդյունքում (Տես՝ կից հետազոտությունը): Միթե տոկոսի համահարթեցմամբ փորձ չի արվում անտեսել հարկային վարչարարության խորքային բարեփոխման անհրաժեշտությունը:

Համահարթ եկամտային հարկի ներմուծումն ընդամենը պատրվակ է հարկային վարչարարությունը լավացնելու համար, քանի որ տարբեր տոկոսադրույքներ հաշվելը որևէ դժվարություն չի ներկայացնում ժամանակակից տեխնիկական միջոցների առկայության պայմաններում: Վրաստանի հարկային մարմինը այսօր էլ պատճառաբանում է, որ պրոգրեսիվ համակարգը կբարդացնի իրենց հաշվարկները, սակայն, հաշվի առնելով, որ նման բարդություն գոյություն չունի, ակնհայտ է, որ դա պատրվակ է քաղաքական որոշումն արդարացնելու և անարդար հարկումը պահպանելու համար:

ԱՄՀ գնահատականներով (2018) սովերային տնտեսության 2015թ. ցուցանիշը Հայաստանի համար կազմում է 35,96 տոկոս, իսկ Վրաստանում՝ 53,07 տոկոս: Հետևաբար սովերային տնտեսության հաղթահարման փաստարկը նույնպես չի գործում և ծանրակշիռ չէ:

2018թ. մայիսից անցած 6-7 ամիսների փորձը ապացուցում է, որ շուրջ 40.000 նոր աշխատատեղերի գրանցումը տեղի է ունեցել բոլորովին այլ պայմանների՝ տնտեսական և քաղաքական միջավայրի փոփոխության պատճառով: Այս փոփոխությունների արդյունքներին սպասելու և դրանք խորապես վերլուծելու դեպքում հնարավոր կլինի որդեգրել լավ հիմնավորված հարկային հայեցակարգ:

3.ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

– Աշխատավարձերի բարձրացումը խթանվում է ոչ թե համահարթ տոկոսադրույքի, այլ աշխատանքի արտադրողականության, մասնագիտական կրթության, որակավորման մակարդակի և տնտեսական միջավայրի բարելավման միջոցով:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Համահարթի կողմնակիցները պատճառաբանում են, որ շեմերի սահմանումը հանգեցնում է, օրինակ, 150.000-ի շեմին մոտ աշխատավարձերի սահմանմանը և խոչընդոտում է աշխատավարձերի աճին: Ըստ այդ տրամաբանության, աշխատավարձերը կաճեն և վճարվող աշխատավարձերի կառուցվածքի էական փոփոխություն տեղի կունենա: Ստորև ներկայացնենք, թե ինչու այս փաստարկը չի համապատասխանում իրականությանը և ինչ գործոններ են ազդում աշխատավարձի չափի վրա:

ՓԱՍՏԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Այս հիմնավորումը սխալ է, քանի որ ՀՀ-ում գործող պրոգրեսիվ համակարգը սահուն է և այդ շեմերը կտրուկ չեն ավելացնում հարկային բեռը (Տես՝ առաջին էջի գծապատկերը): Նույնիսկ եթե ընդունենք, որ շեմերը ինչ որ դեր են խաղում, ապա աշխատավարձերի մակարդակի լճացումը կարելի է լուծել պրոգրեսիվ համակարգը բարեփոխելու՝ շեմերն ու տոկոսադրույքները փոխելու արդյունքում: Այդ նպատակին կարելի է հասնել նաև ստորին շեմը 150.000-ից բարձրացնելու և ստորին տոկոսադրույքը 23-ից իջեցնելու արդյունքում, այսինքն դարձյալ՝ առանց համահարթեցման: Ի դեպ, «Ելք» խմբակցությունը նախկինում Ազգային ժողովում պրոգրեսիվ համակարգի բարեփոխման օրինագծի համահեղինակ է եղել:

Բացի այդ, պարզ չէ, թե ինչու պետք է խնայված գումարը գործատուն ուղղի աշխատավարձի բարձրացմանը, եթե պարզապես կարող է խնայել այդ գումարը և մեծացնել իր կապիտալը: Իսկ գույքահարկի բարձրացման դեպքում այդ միջոցները պարզապես չի ներդնի Հայաստանում, այլ գույք ձեռք կբերի արտերկրում:

Ավելին, որոշ աշխատողների որակավորման կամ կրթության մակարդակի պայմաններում գործատուն պարզապես պատրաստ չէ ավելին վճարել այդ աշխատողին: Այստեղ, խիստ էական է արտադրողականության մակարդակի և տնտեսական այլ գործոնների դերը:

4. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ, ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ, ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԷԺԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

– Կարելի է իջեցնել եկամտային հարկի դրույքաչափերը, սակայն դա որևէ կերպ կապված չէ համահարթեցման հետ: Արտադրական ներդրումների աճի համար նույնպես համահարթ տոկոսադրույքի նպաստավորության պրակտիկ ապացույցներ գոյություն չունեն:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Կառավարությունն ասում է, որ համահարթ տոկոսադրույքը կարող է բերել ներդրումների աճի: Առհասարակ, աշխատանքի հարկի նվազեցման արդյունքում արտադրողական աշխատուժը կդառնա պահանջված և աշխատատար գիտելիքահենք արտադրությունները կլինեն մրցունակ, ինչն էլ կնպաստի արտահանմանը միտված ճյուղերի զարգացմանը:

ՓԱՍՏԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Այլ երկրների, մասնավորապես Վրաստանի փորձը ցույց է տալիս, որ համահարթ եկամտահարկի ներմուծման արդյունքում ներդրումների էական աճ տեղի չի ունենում: Վրաստանում ներդրումների առյուծի բաժինը կատարվել է հանքարդյունաբերության, շինարարության և ցածր աշխատավարձով ոլորտներում և հիմնականում կասկածելի ու ֆինանսական արկածներ փնտրող ընկերությունների կողմից:

Ինչ վերաբերվում է արտահանող ճյուղերի և արտադրողական աշխատուժի խրախուսմանը, ապա դա ոչ մի կապ չունի տոկոսադրույքի համահարթեցման հետ: Աշխատանքի հարկման նվազեցմանը կարելի է հասնել նաև իջեցնելով եկամտային հարկը, բայց պահպանելով պրոգրեսիվ համակարգը: Կարելի է ընտրել հարկային ռեֆորմի այն տարբերակը, որի դեպքում բյուջեն զգալի կորուստներ չի ունենա և կպահպանվի պրոգրեսիվ տրամաբանությունը: Կրկին նշենք, որ վերջինս ոչ թե տեխնիկական նպատակահարմարության, այլ քաղաքական որոշման հարց է:

5. ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

– Համահարթ եկամտահարկը կիրառվում է ծայրահեղ աջ կառավարությունների կողմից և հակասում է համերաշխության դրոշի տակ Հայաստանում տեղի ունեցած հեղափոխության քաղաքական տրամաբանությանը, այն չի ներառում ընտրող-ների մեծամասնության շահերը:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Հայկական հեղափոխությունը հանգուցալուծումն էր վերջին տասնամյակում սոցիալական արդարության համար թափ հավաքած քաղաքացիական շարժման: Մարզերի ու Երևանի արվարձանների աղքատացած բնակչությունը երկար ժամանակ մեկուսացված է եղել քաղաքական որոշումներից և չի կարողացել ունենալ քաղաքական ներկայացվածություն ու պաշտպանել սեփական շահերը: Համահարթեցումը կարող է էապես սրել այս բևեռացումը և սասանել հանրային համերաշխությունը: **Նախորդ կառավարությունները, ունենալով լեգիտիմության և անօրինական կապիտալի կուտակման խնդիր, ստիպված են եղել պահպանել պրոգրեսիվության որոշակի տարրեր՝ մեղմելու և զսպելու սոցիալական բողոքը: Իրավական պետության սկզբունքի կիրառման դեպքում առավել ևս կարևոր**

է հարկային արդար և հավասարակշռված մոտեցումը, որպեսզի դեռևս հին անհավասարությունները չհաղթահարած, չստեղծվեն նորերը:

Սպառման հարկերն անվերջ բարձրացնել հնարավոր չէ: Իսկ սխալ բարեփոխման արդյունքում ուղղակի հարկերի հավաքագրման և հարկային բազայի նվազումը կարող են ավելի շատ սրել հարկաբյուջետային կայունության հիմնախնդիրները (տես՝ կից գծապատկերները):

ՓԱՍՏԵՐ, ՓԱՍՏԱՐԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2016թ.-ին 10-րդ դեցիլային խմբի (ամենաապահովված 10 տոկոսի) եկամուտները 17,5 անգամ գերազանցել են առաջին դեցիլային խմբի եկամուտներին: Տարակուսանք է առաջացնում, թե ինչպես կարելի է, արձանագրելով այս ցուցանիշը, ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կխրախուսեն այս միտումը: **Իզուր չէ, որ աշխարհի երկրների ճնշող մեծամասնությունն ունի պրոգրեսիվ եկամտահարկային համակարգ:** ԵՄ անդամ երկրներից միայն երեք երկիր ունի համահարթ մոդել, իսկ ԵԱՏՄ երկրներից՝ շատերը: Պրոգրեսիվ համակարգը սերունդների և խավերի միջև հանրային համերաշխության բանաձև է, որը թույլ է տալիս սկսնակներին ավելի նպաստավոր պայմաններում լինել և օգուտ ստանալ մյուսների վճարած ավելի բարձր հարկերից ձևավորվող պետական բյուջեի եկամուտներից:

Համերաշխության հեղափոխության սոցիալական բազան հենվում է անապահով շերտերի և միջին խավի փխրուն փոխգիջման վրա: Այդ հավասարակշռության կտրուկ խախտումը քաղաքական լոբբինգ ունեցող միայն մեկ խավի օգտին կարող է լուրջ խնդիրներ ստեղծել կառավարության հեղինակության համար: Համահարթ եկամտային հարկը հստակորեն նախանշում է այդ ուղղությունը: Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ կապիտալի համար նման սողանցք ստեղծելուց և բյուջետային կորուստներ ունենալուց հետո շատ ավելի դժվար է լինում վերստին պրոգրեսիվ համակարգի ներմուծումը և դրա դեմ ուղղված քաղաքական լոբբինգի և դիմադրության հաղթահարումը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ցանկացած հարկային ռեֆորմ նշանակում է վերաբաշխում: Հարցը այն է, թե ում օգտին է տեղի ունենում այդ վերաբաշխումը: Քննարկվող տարբերակը վկայում է, որ այն տեղի է ունենում բարձ վաստակողների օգտին և ի վնաս ցածր վաստակողների՝ հատկապես հաշվի առնելով անուղղակի հարկատեսակների զուգահեռ աճը: Վերը նշված փաստերը, փաստարկներն ու հիմնավորումները ցույց են տալիս, որ համահարթ եկամտային հարկի ներմուծման հարցը ոչ թե նպատահարմարության և նոր կառավարության տնտեսական աճի և հոգատար պետության տրամաբանության, այլև որոշակի տնտեսական գաղափարախոսության արդյունքն է:

Համահարթ եկամտահարկի ամենամեծ սիրահարները նախկին ԽՍՀՄ երկրներն են, որոնք, ներդրումների խիստ ծարավ ունենալով և համեմատական այլ առավելություններ չունենալով, փորձել են կոռուպցիայով և իրավական անպաշտպանությամբ աչքի ընկնող տնտեսական միջավայրը գրավիչ դարձնել օտարերկրյա ներդրողների համար: Այդ երկրների տնտեսական ցուցանիշները բոլորիս հայտնի են: Անդրադառնալով այլ երկրների փորձին՝ նշենք, որ եվրոպական երկրների զգալի մասը և հատկապես սկանդինավյան երկրներն անգամ 50 տոկոսից

բարձր դրույքով պրոգրեսիվ հարկային համակարգ են կիրառում, ինչի շնորհիվ պետությունը կարողանում է ֆինանսավորել տնտեսության խթանման, ինչպես նաև կրթական, սոցիալական, առողջապահական և պետական ներդրումներ ենթադրող մի շարք այլ միջոցառումներ: Պատմական համատեքստում արժանահիշատակ է, որ 1929 թվականի ճգնաժամից հետո «New Deal»-ի ժամանակ ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը ամենաբարձր եկամտի համար 75 տոկոսանոց պրոգրեսիվ հարկատեսակ է ներմուծել ԱՄՆ-ում:

Եվ վերջապես, կարևոր է արձանագրել, որ հատկապես ապրիլյան Հայկական հեղափոխության համատեքստում տվյալ նախաձեռնությունը չի արտացոլում մեծամասնության շահերն ու օրակարգը, անապահով լայն զանգվածների և միջին խավի համերաշխության վրա հենվող կոնսենսուսը, այլ հանդիսանում է որոշակի նեղ տեխնոկրատական պատկերացումների ու շահերի, լավ վաստակողների միակողմանի անհատապաշտական նախագիծ: Ներկայումս Եվրոպայում և այլուր սոցիալական անարդարության դեմ սկիզբ առած քաղաքացիական շարժումների համատեքստում համահարթեցման ներմուծումը անցանկալի հանգրվան կարող է կանխորոշել ի սկզբանե խոստումնալից Հայկական սիրո և համերաշխության, թավշյա, ոչ բռնի հեղափոխության համար:

ԱՌԱՋԱՐԿ

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից և հիմնավորումներից, առաջարկում եմ հետևյալը՝

1. Քանի որ հարկային հաճախակի փոփոխությունները վնասակար են տնտեսական միջավայրի համար, ապա անհրաժեշտ է բազմակողմանի հանրային քննարկման միջոցով գտնել եկամտային հարկի և մյուս հարկատեսակների լավագույն փոխզիջումը, որը հաշվի կառնի լայն խավերի և միջին խավի շահերը:
2. **Անհրաժեշտ է վերանայել եկամտային հարկի դրույքաչափերն ու շեմերը, բայց պահպանել պրոգրեսիվ եկամտային հարկի սկզբունքը:** Հնարավոր տարբերակ կարող է լինել ստորին շեմի բարձրացումը մինչև 250.000, ինչպես նաև 20 և 25 տոկոսադրույքների սահմանումը: **«Քինանսների նախարարության ներկայացրած 9 սցենարներից զատ կարելի է գտնել բազմաթիվ այլ սցենարներ, որոնք թույլ կտան պահպանել պրոգրեսիվության սկզբունքը, չվտանգել հարկաբյուջետային կայունությունը և լուծել վերը նշված մյուս խնդիրները: Հարկային ռեֆորմը քաղաքական որոշման առարկա է:**
3. Առաջիկայում ստեղծել աշխատանքային խումբ քննարկելու կուտակային կենսաթոշակային համակարգի բարեփոխումները՝ դրանք հնարավոր շտկումների կամ վերանայման ենթարկելու նպատակահարմարությունը ստուգելու համար, քանի որ այս հարցը սերտորեն կապված է Հայաստանում եկամուտների բաշխման և միջոցների արդար և արդյունավետ ներդրման հետ: Չիլիի կառավարությունը արդեն իսկ մի քանի անգամ վերանայել է կուտակային համակարգը, որը նման է մեր մոդելին:
4. Դիվերսիֆիկացնել տնտեսագիտական փորձագիտական դաշտը՝ տնտեսական որոշումների կայացումը դեմոկրատական վերահսկողության տակ պահելու և նեղ մասնագիտական խմբերի կողմից մենաշնորհման ռիսկերից

ծերբազատվելու համար: Այդ նպատակին կարելի է հասնել, օրինակ, ռոտացիոն սկզբունքով տնտեսագետների անկախ խորհուրդ ստեղծելու և կառավարության համար բազմակողմանի փորձագիտության միջոցով:

5. Ուսումնասիրությունների ընթացքում հաջողվել է միջազգային կապեր հաստատել օգտակար փորձը փոխառելու համար: Մասնավորապես, գործընկերներիս հետ պատրաստվում եմ Հայաստան հրավիրել Մակեդոնիայի ֆինանսների նախարար Դրագան Տևոդևսկուն, բարձրակարգ տնտեսագետների Գերմանիայից, Ալվակիայից, Չեխիայից, Վրաստանից և այլ երկրներից:

Սույն դիրքորոշմանը կից ներկայացվում են մի շարք հետազոտական նյութեր, որոնք հիմք են ծառայել այստեղ բերված փաստարկների և հիմնավորումների համար:

Գրականություն

Աշոտ Խուրշուդյան, *Եկամտային հարկ. ինչ կար, ինչ կա և ինչ է առաջարկվում այժմ* (գծապատկերներ), 11.10.2018թ. դրությամբ նյութը հասանելի է b4b.am տնտեսական վերլուծական կայքում:

Հովհաննես Ավետիսյան, *Արդյոք գնահատվել են հարկային բարեփոխման ռիսկերն ու ազդեցությունը*, Քաղաքական դիսկուրս, հղումը՝ <http://diskurs.am/2018/10/1016/>:

Վահրամ Սողոմոնյան, *Ո՞րն է սիրո և համերաշխության հարկային համակարգը*, Քաղաքական դիսկուրս, հղումը՝ <http://diskurs.am/2018/10/1037/>:

The Little Book of Revolution: A Distributive Strategy for Democracy by David Akadjian (2014-09-26) Paperback – 1656.

IMF Executive Board Concludes 2017 Article IV Consultation for the Republic of Armenia, July 13, 2017. <https://www.imf.org/en/News/Articles/2017/07/13/pr17280-imf-executive-board-concludes-2017-article-iv-consultation-for-the-republic-of-armenia>

Italy's doomed flat tax plans, Stefano Fugazzi explains why the flat tax system's mixed track record in Eastern Europe hinders the centre-right's plan to introduce a 15 percent tax rate in Italy. Source: <https://www.tremr.com/stefano-fugazzi/italys-doomed-flat-tax-plans>.

“Wealth Tax”, The Revenue Act of 1935, 49 Stat. 1014 (Aug. 30, 1935).

IMF (2014), INET (2013/14)

OECD (2015): “*In it together: Why less inequality benefits all*”

Wilkinson/Pickett (2010): “*The spirit level: Why equality is better for everyone*”

Thomas Piketty (2014): “*Capital in the 21st century*”


Joseph Stiglitz (2012): “*The price of inequality*”

Anthony Atkinson (LSE) (2015): “*Inequality – What can be done?*”


Walter Hettich, Stanley L. Winer (2005): *Democratic Choice and Taxation: A Theoretical and Empirical Analysis*, Cambridge University Press, Nov 3, 2005, 344 pages.

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ


Գծապատկեր 1. Վրաստանում ստացվող ամբողջ եկամտի մեջ տարբեր չափի եկամուտ ունեցողների մասնաբաժինը (ձախ կողմում) և հարկ վճարողների թվաքանակն՝ ըստ եկամտի չափի (աջ կողմում): Աղբյուրը՝ Վրաստանի պետեկամուտների ծառայություն:




Գծապատկեր 2. Համահարթեցված եկամտահարկի դեպքում բարձր վաստակողների համար բացվող սողանցքը, ինչն անհավասար պայմաններ է ստեղծում կայացած կապիտալի և սկզբնական կապիտալի միջև: Աղբյուրը՝ *The Little Book of Revolution: A Distributive Strategy for Democracy* by David Akadjian (2014-09-26) Paperback – 1656:



Գծապատկեր 3. 2017 թվականին նոր հարկային օրենսգրքով եկամտահարկի փոփոխված և նախկին դրույքաչափերի համեմատությունը: Աղբյուրը՝ Աշոտ Խուրշուդյան, Եկամտային հարկ. ինչ կար, ինչ կա և ինչ է առաջարկվում այժմ, b4b.am:



Գծապատկեր 4. Եկամտահարկի փոփոխության երկու նոր առաջարկների դեպքում (դեղինը՝ պրոգրեսիվ երկդրույք և կապույտը՝ համահարթեցված) տեղի ունեցող հարկային բեռի թեթևացումները տարբեր չափի եկամուտ ստացողների համար: Աղբյուրը՝ Աշոտ Խուրշուդյան, Եկամտային հարկ. ինչ կար, ինչ կա և ինչ է առաջարկվում այժմ, b4b.am:



Գծապատկեր 5. Հարկային եկամուտների, ՀՀ մշտական բնակչության և պետական պարտքի դինամիկան: Աղբյուրը՝ Հովհաննես Ավետիսյան, Արդյոք գնահատվել են հարկային բարեփոխման ռիսկերն ու ազդեցությունը, Քաղաքական դիսկուրս, հղումը՝ <http://diskurs.am/2018/10/1016/>:

